ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 2781-Ա « 16 » հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանի 03.07.2025 թվականի №Ն/36708-25 զեկուցագիրը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի 05.06.2025 թվականի գրությունը և Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի քաղաքապետի տեղակալ, տրանսպորտի և ճանապարհային տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ Մաքսիմ Լիկսուտովի նամակ-հրավերը՝ 2025 թվականին նախատեսված 4-րդ միջազգային տրանսպորտային գագաթաժողովին մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի օգոստոսի 20-ից 24-ը ներառյալ գործուղել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա՝ հետևյալ կազմով.

Վազգեն Հարությունյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ
Բաբկեն Սեդրակյան	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանի բացակայության ընթացքում տրանսպորտի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության երթևեկության կառավարման բաժնի պետ Հայկ Էվոյանին:

4. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի բացակայության ընթացքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ

բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական գծով տնօրեն Հարություն Դանիելյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ